№ 165 ԿԻՐԱԿԻ ՕՐԻԼԻՍԻ 29 1901 ԿԻՐԱԿԻ ՕՐԻԼԻՍԻ 29 № 165

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկ.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Ս անրանկար. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Իտալիայում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Վերջապէս հայկական իրականութիւնն էլ ցոյց տուեց, թէ միշտ հօ լալկան չը պիտի մընայ, երբեմն կարող է եւ ժպիտներ արձակել։ Ստուգեցէք։ Մեր տխուր հորիզոնի վրա խտացած կապարեայ, խեղդող ամպերի միջից էլ միմիմ անգամ կարող է կաթել լոյսի սիրուն ճառագայթ։

Ո՞րպիսի հրաչք...

Եւ ես մեծ հաճութեամբ գալիս եմ այսօր ձեզ հետ ուրախանալու, սիրելի ընթերցող։ Իմ թոյլ կը տաք։ Մի լապտեր ունեմ իմ ձեռքին, որ լուսաւորում է ձեր առաջ հայրենի պ։ կարգութիւններն ու վատութիւնները։ Այդպիսի մէֆիստոֆէլեան հաճոյք ունի նա։ Գատրուստ էր այս անգամ հասարակաց դատաստանի առաջ հանել մեր հոգեւոր գործերի մէջ տիրող անիշխանութիւնը, մեր սանձարձակ տէրտէրների գործքները, այնպիսի տխուր ու ոգեղ արարքներ, որոնց այլ եւս հարկաւոր չէն հանդարտում թագցնել, որոնց խոստովանեցին հրապարակով երկու քահանայ—մէկը Գորուց, մէս

Թիֆլիսից։ Իմ լապտերը պատրաստ էր շարունակել նաեւ հայի ազգային մեծամտութեան համար այնքան վիրաւորական համեմատութիւնը հարուստ, ոսկեչող հայի եւ վրացու կամ թուրքի մէջ։ Բայց...

Տասնեակ հազարաւոր ժողովուրդներով իր տարբաթախտ հողից հեռացած թիւրքահայը հէնց այս միջոցին գալիս է մեր տրամադրութիւնը փոխելու։ Մի կողմ եմ դնում իմ լապտերը։ Լսում եմ մի սիրուն ձայն, որ ասում է «Մենք, այնուամենայնիւ, կը տանենք մեր խաչը եւ կուշխատենք ժպտալ»։

Եւ որտեղից է այսպէս խօսում այդ թիւրքահայը, այդ մշտական սգաւորը։—Ամերիկայից։

Կարդացէք ուրբաթ օրվայ «Մշակի» թղթակցութիւնը։ Կարդացէք, մի բաւականանաք մի անգամով։ Հայոց պարբերական մամուլը շատ չէ մեզ սփոփում, ուրախացնում այդպիսի գրուածքներով։

Երեւակայեցէք մի այսպիսի կտոր մեր իրականութիւնից։ Ամերիկական գործարաններում ծխրտած, մաշվող հայը գտնում է միջոց օգնելու իր հեռաւոր, արիւնաներկ հայրենիքին։ Միանում են այդ չարքաշ պանդուխտները, լացով ու հառաչանքներով հացի կտոր աշխատող այդ մարտիրոս մշակները, յօժար կամքով, մեծ հաճութեամբ բաժին են հանում իրանց արիւն քրտինքով աշխատած վարձից, որպէս զի փողի գումարներ կազմեն եւ ուսում ու լուսաւորութիւն տարածեն մայր հայրենիքում, տգէտ, խաւար, շնչասպառ հայրենակիցների մէջ։

Եւ արդէն կան 15 ընկերակցութիւններ։ Հաւաքված է 30,000 դոլլար (մօտ 50,000 ռուբլի)։

Ահա մի մեծ ոյժ...

Ի՞նչպէս է նա գոյացել։ Կոպէկներից, տասը տարիների ընթացքում։ Ո՞վ են այդ կոպէկները միասին հաւաքողները։—Գիւղացի մարդիկ։ Հաւաքվում են նրանք, աշխատաւորի դառն ու հոգեմաշ օրից յետոյ, յիշում են իրանց հեռաւոր երկիրը, իրանց ցաւերն ու կրակը։ Ախ ու վայով կեանքի պայքարի հարց չէ լուծվում. ախ ու վայը մեռնողների, անհետ կորչողների բաժինն է։ Այդ խեղճ մշակները հասկանում են, որ լայն ու կոծը եթէ մարդու օգնականները լինէին, Թիւրքաց Հայաստանը այժմ դրախտ պիտի լինէր։ Սակայն ուր է։ Արտասունքը աւերակների մոխիրներն են միայն կլանում։ Եւ ասում են բանուոր հայերը. «Եկէք օգնենք մեր գիւղի դպրոցին»։

Սա արդէն լաց չէ։ Սա արդէն ապրելու ցանկութիւն ունեցող ժողովրդի ինքնավստահութիւնն է։ Ու բաց է անում իւրաքանչիւրը իր թշուառ քսակի բերանը, այնտեղ եղած կոպէկներից մի բաժին է հանում ու դնում է եղբայրական գանձանակի մէջ։

Սուրբ գործ։ Թղթակիցը պատմում է մի ջրանցքների տամուկ խաւարից՝ գունատ ու դողդոջուն, շարժվում է այն ոսկեզօծ ալիքների վրա եւ խխունջներ որսում, երերվում է հարուստ հիւրանոցների դռների, լուսամուտների առաջ, փովում է պալատների աստիճանների վրա եւ իր երկրի արեւի տակ՝ իր տեղը եւ իր սիրուն ջրանցքների ափին՝ իր փոքրիկ անկիւնն է խնդրում։ Ծայրայեղ փարթամութիւնն ու ծայրայեղ խեղճութիւնն այստեղ կողք կողքի են ընթանում, առաջինը՝ վայելքն ու պերճութիւնը՝ օտարինն է մեծ մասամբ, երկրորդը, այս հիւծող աղքատութիւնը, տեղական է, պատկանում է իրան Վենետիկին, նրա ողորմելի զաւակներին։ Վենետիկն իսկապէս ճանաչելու համար պէտք չէ շարունակ գօնդոլով շրջել եւ միմիայն պալատներն ու եկեղեցիներն այցելել. կան նաեւ կամուրջներով իրար միացած, ցամաք փողոցներ՝ նեղ ու ոլորուն, կեղտոտ ու հոտած. ահա այդ փողոցները պէտք է շրջել ոտքով, պէտք է ներս մտնել բակերը, տները եւ տեսնել, թէ որ աստիճան նողկալի է այդ ամենը։ Փողոցներ կան, ուր երկու հոգի իրար հանդիպած ժամանակ մէկը պատին պիտի քսուի միւսին ճանապարհ տալու համար. այդ բաւական չէ, երկու կողմից էլ տները բարձրանում են վեր վեր եւ կատարում աւելի են մոտենում իրար իրանց վառարանների ծխնելոյզների դուրս ցցած մասերով եւ այսպիսով կազմվում է մի հոտած, խաւար նրբանցք. այսպիսի փողոցներում լուսամուտներ կան դէմ առ դէմ՝ այնքան մոտիկ իրար, որ մէկից կարելի է համարձակ ցատկել միւսի մէջ։ Այս խուլ անկիւններում այնպիսի հոտած, ողորմելի տներ կան, որոնք դարեր առաջ են շինվել, այնպիսի նկուղներ, գետնափորներ, գարշահոտ բներ, որ մարդ զզուանքով ու երկիւղով է ներս նայում, եւ սակայն այդ տեղերում մարդիկ են ապրում, Վենետիկեան փարթամ, հզօր հանրապետութեան զաւակներ, միացած Իտալիայի քաղաքացիներ։

Եւ մի այնպիսի ընտանիք տեսայ այստեղ, որ իր անօրինակ խեղճութեամբ յիշեցնում էր հայ գաղթականներին նրանց նոր հասած ժամանակ. դա մի ողբալի կարաւան էր, հայր մայր եւ մի տաս տարեկան տղայ, երեքն էլ վտիտ, կեղտոտ, թշուառ, ինչ որ ծռմռուած դէմքերով. այդ բաւական չէ, սրանցից իւրաքանչիւրն էլ գրկած տանում էր մի-մի մութ, գրզրզած զանգուած՝ կմախք դարձած, հիւծած մի-մի երեխայ, եւ այս բոլոր կենդանի դիակները առանց յուղարկաւորների անցնում էին Ս. Մարկոսի հրապարակով, մարմարէ պալատների առաջից, կուրացած սուրբերի հովանու տակից, ոսկեզօծ խաչերի մօտից, անցնում էին դանդաղ, ցաւոտ շարժումներով, ողորմութիւն չէին խնդրում, այլ քայլում էին սգի հանդիսաւորութեամբ. ոչ ոք չը նայեց նրանց,—երեւի այդ սովորական էր.—եւ ցաւի այդ փոքրիկ կարաւանը իր զարհուրելի բեռով գնաց ծածկվելու ոլորուն փողոցների անյայտութեան մէջ...

Երեկոները կամ ճաշին պէտք է մի բոպէ մտնել աղքատ թաղերի էժան ճաշարանները. դա վերին աստիճանի հետաքրքիր է եւ ընտրոյ։ Միս չը կայ, այլ կան տեսակ տեսակ ծովային կենդանիներ, որոնցից մի քանիսի տեսքն անգամ անսովոր մարդուն սրտխառնոց է պատճառում. ինչպէս երեւում է, վենետիկցի ձկնորսը իր ցանցի մէջ ընկած կենդանիների վերաբերմամբ մի հատիկ միայն սկզբունք ունի, այդ այն է, թէ ինչ որ կենդանի է, շարժվում է, անպատճառ պիտի ուտվի։ Մանր բլօճներից սկսած մինչեւ մեծ ձկները, խխունջները, տեսակ տեսակ խեցգետիններ՝ տապակած են ով գիտէ ինչ իւղով մեծամեծ պղնձեայ սպիների մէջ եւ շարած են առանձին առանձին, երեւի տարբեր գներով։ Ներս են մտնում մանր երեխաներ, կանայք, կռացած պառաւներ, ամենքն էլ խեղճ ու կեղտոտ, եւ մեկնում են իրանց ձեռքի մի քանի սուն. խոհարարը արագ արագ վերցնում է ձեռքով եփած կենդանիներից, փաթաթում թղթի մէջ եւ տալիս այցելուին, մի ուրիշը նրա կողքին բարակ թելով կտրում է սիմինդրի հայից շերտեր եւ յանձնում է գնողներին. ահա վենետիկցի ժողովրդի կերածը։ Հռչակաւոր մակարոնին, որ մեծ քանակութեամբ պատրաստվում է հէնց Վենետիկում, այն էլ անմատչելի է այստեղի աղքատ դասակարգին։

Տնտեսական ձախող պայմաններից ծագում առած այս խեղճութիւնը ժամանակի ընթացքում Վենետիկի ժողովրդի մէջ առաջ է բերել մի քանի վերին աստիճանի անհամակրելի գծեր, որոնք քաղաքակիրթ Եւրոպայում անհանդուրժելի են։ Առեւտրական այնպիսի բարքեր են ստեղծված, որոնք մեր երկրի չարչի վաճառականներին կարող են զարմացնել. անպայման խաբէութիւնն այստեղ առեւտրի հիմունք է կազմում։ Չը կայ ապրանք, որ ձեզ վաճառեն առաջին գնով. եթէ 5 ֆրանկ ասեն, անպատճառ կը տան $2^1/_2$—3 ֆրանկով, եւ եթէ անծանօթ էք, ձեզնից կը գշլեն՝ որքան կարող են, երբեմն երկու, երեք անգամ աւելի իսկական գնից։ Օտարականը չուկայով անցնելիս բաւական է, եթէ հետաքրքրվելով մի ակնարկ ձգի խանութի վիտրինում դրված առարկաների

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՏԱԼԻԱՑՈՒՄ

(Ուղեւորի թռուցիկ տպաւորութիւններ)

IX

Օտարականը, Վենետիկ հասնելով, իջեւանում է հիւրանոցի վերածած մի հին պալատում, ուր նրա տրամադրութեան տակ են ժամանակակից ճոխ կեանքի ամենանուրբ պահանջներին բաւականութիւն տուող ամենատեսակ յարմարութիւններ։ Ապա նա վերցնում է ուղեցոյց գրքոյկը, իջնում է դռանը սպասող չքեղ գօնդոլի մէջ եւ շրջում է քաղաքը։ Ինչ ասել կուզի, ոչ մի ուղեցոյց կազմող, որ անշուշտ վենետիկցի է, այնքան միամիտ չի լինի, որ պարտաներից, թանգարաններից, եկեղեցիներից եւ այլ հետաքրքիր չէնքերից դուրս՝ ուրիշ բան յիշատակի իր գրքում, եւ ճանապարհորդը այդ ուղեցոյցով դիտում է միայն այս զարմանալի քաղաքի սքանչելիքները, գեղեցկութիւնները։ Բաւական է միայն անցնել մեծ ջրանցքով, դուրս գալ Ս. Մարկոսի հրապարակը՝ Վենետիկն այլ եւս յաւիտեան չը մոռանալու համար. էլ ինչ զարմանք, որ օտարականը հիացած է հեռանում Վենետիկից եւ գնում է աշխարհում տարածելու հինաւուրց քաղաքի հռչակը։

Պատկերի միւս կողմը՝ Վենետիկի այս հրաշալիքների, արտաքին փայլի, այս քանդակազարդ մարմարների տակ թաղված ծայրայեղ խեղճութիւնն է, որ երբեմն դուրս է սողում

կարգի մեծ մասը մասնակցութիւն չունեն գործաւոր մարդկանց այդ սիրուն, մեծ, յուսատու ձեռնարկութեան մէջ։ Լուսաւորված երկրում հայը իր ազգային պարտականութիւնը կատարելու ջանքեր է անում. նա հիմնում է որբախնամ դպրոցասէր ընկերութիւններ, գրադարաններ է բաց անում։ Եւ ամեն տեղ գործողը, շարժողը, ապահովողը աղքատի քսակն է, բանուորի, գործակատարի, արհեստաւորի քըսակը։

Գեղեցիկ օրինակ, գեղեցիկ ապագայ, որ մեզանում թագնված է մի մեծ, բարերար ոյժ, եւ այդ ոյժի անունն է՝ ժողովրդական կօպէկ...

Եւ նա մեր ապագայի ամրողջ յոյսն է։

Լ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ուրբաթ, յուլիսի 27-ին, գիշերվայ ժամը 10-ից անց Իսարլեան եւ Միքայէլեան փողոցների անկիւնում, Անանօվի փայտեղէնի պահեստում եւ աղոցարանում հրդեհ սկսվեց, որ ամենակարճ միջոցում վիթխարի չափեր ընդունեց, յիշեցնելով Բագուի վառվող նաւթաշտարուանները։ Կրակը բարձր ու լայն բոցեղէն սիւնի նման ժայթքում էր վերեւ, լուսաւորելով Թիֆլիսի ամբողջ արեւելեան մասը եւ Դաւթի ամբողջ սարը։ Ամբոխը ամեն կողմից ահագին բազմութեամբ դիմում էր հրդեհի տեղը, ուր չուտով օգնութեան հասան հրդեհաշէջները եւ հեծեալ ու հետեւակ զինուորներ, որոնք չրջապատեցին Անանօվի սեփականութիւնը։ Ժամի 12-ի մօտ հրդեհաշէջներին աջողեց թուլացնել կրակի ոյժը եւ ամբոխը սկսեց հետզհետէ ցրվել։ Ժամի 1½-ին դեռ հրդեհաշէջները շարունակում էին իրանց գործը։

—

Յուլիսի 26-ին Թիֆլիսի երկաթուղային կայարանում պատահած հրդեհի պատճառները պարզելու եւ նրանից հասած վնասների չափը որոշելու համար, Անդրկովկասեան երկաթուղու կառավարչի կարգադրութեամբ, կազմված են երկու առանձին ժանտժողովներ, որոնք արդէն ձեռնամուխ են եղել իրանց գործին։

—

Առաջիկայ սեպտեմբեր ամսից Թիֆլիսի առեւտրական դպրոցում բացվելու է ոչ երրորդ դասարան, ինչպէս հաղորդված էր առաջ լրագիրներում, այլ երկրորդ դասարան։ Անցեալ տարի առեւտրական դպրոցն ունէր միայն պատրաստականներ եւ առաջին դասարան, իրանց զուգընթաց բաժանմունքներով։

—

Կիեւից հեռագրում են «Россія» լրագրին. «Ուսումնարանական չրջանի վարչութեան հարցին իրրեւ պատասխան՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրը բացատրեց, թէ բոլոր ուսանողները, որոնք արձակված են այժմ զինուորական ծառայութիւնից, պէտք է յետ ընդունվեն համալսարանները՝ շարունակելու համար այն կիսամեակը, որից արձակված են։ Նրանց թոյլ չէ տրվում բռնել աշնանային քննութիւններ, որովհետեւ նրանք չեն լսել դասախօսութիւններ անցած գարնան ընթացքում։ Իսկ այն ուսանողներին, որոնք կը ցանկանան շարունակել զինուորական ծառայութիւնը, ընդհանուր զինուորագրութեան վերաբերմամբ օրէնքով որոշված ժամանակամիջոցը լրացնելու համար, իրաւունք է տրվում յետոյ նորից մտնել համալսարանները եւ շարունակել լսել այն կիսամեակի դասախօսութիւնները, որից նրանք արձակված են։

—

«Новости» լրագրին հեռագրում են Եկատերինօսլավից, թէ, տեղական նահանգական դատարանի պրոկուրորի պահանջմամբ, կալանաւորված են Եկատերինօսլավի առեւտրական բանկի դիրեկտոր Բրազոլ եւ նոյն բանկի վարչութեան անդամները։

—

Լեւ Տոլստոյին նորերս արտասահմանից այցելելու եկել էր ֆրանսիական յայտնի գրող Պոլ Բուրժէ։

—

«Нива» շաբաթաթերթի հրատարակիչ Մարկս գնել է Գլեբ Ուսպէնսկու բոլոր գրուածքների հրատարակութեան իրաւունքը 100,000 ռուբլով։

—

«Новое Время» լրագրում տպագրված է ներքին գործերի մինիստրի չրջաբերականը՝ ուղղած նահանգապետներին, որով մինիստրը պարտաւորութիւն է դնում նահանգապետների վրա հսկել, որ հասարակայ տներում 21 տարեկանից փոքր աղջիկներ չը գտնվեն։ Հասարակաց տների պահողները, այս կանոնը խախտելու դէպքում, կենթարկվեն դատաստանական պատասխանատուութեան։

—

Մոսկվայում քաղաքային բժիշկ Տիխօմիրովի տանը ապրում է մի ֆէնոմէնալ վեց տարեկան գիւղացի երեխայ, Իվան Գօրօխով։ Նրա հասակը 2 արշին 3 վերշոկ է եւ մարմնի քաշը մօտ 4 պուդ։ Սեպտեմբերին բժիշկը Գօրօխովին ցոյց կը տայ բժշկական ընկերութեան ժողովում։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Նկարիչ Վարդգէս Սուրէնեանցը հրաւիրված է այստեղի կայսերական օպերային թատրօնում նոր դէկորացիաներ նկարելու Ռուբինշտէյնի «Դեւ» օպէրայի համար»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 22-ին Ղուբա եկաւ Շամախու թեմի յաջորդ՝ Եփրեմ վարդապետ Սուքիասեան, Տաճատ քահանայի հետ։ Այստեղ գալու պատճառը եղել են այն բողոքները, որոնք ուղարկված են եղել մեր եկեղեցու երէցփոխի մասին։ Միւս օրը եկեղեցի հրաւիրեցին այստեղի հայ ժողովրդին եւ նրա առաջ հաչիւ պահանջեցին երէցփոխ պ. Հ. Մելիք-Դադայեանից, որը, ինչպէս ասում են, բարեխղճաբար եւ ճիշդ հաչիւ է ներկայացրել քննիչներին։ Նոր ընտրութիւն կը լինի ներկայ տարվայ դեկտեմբեր ամսին»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ամսիս 23-ին Կրիվայա փողոցում սարսափելի հրդեհին հինգ րոպէում զոհ գնաց Բերիեվի կահ-կարասիքի մագազինը։ Հրդեհը սկսվեց խանութի ներսից, երբ գործակատարը վառ ժոմը ձեռին աթոռներ էր ուզում դուրս բերել։ Աղէտի տեղը հասան տեղիս հրդեհաշէջները, սակայն օգնութիւն անել անհնարին եղաւ։ Վնասվեց եւ հարեւան պատրաստի հագուստ ծախողը։ Բերիեվի խանութում, ինչպէս հաստատ աղբիւրներից իմացանք, եղել է 60 հազար ռուբլու ապրանք, որ ապահովագրված է ընդամենը 20 հազար ռուբլով, որովհետեւ ապահովագրական ընկերութիւնը կահ-կարասիքից մեծ տոկոս է վերցնում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Българія» պաշտօնական լրագրի ասելով՝ ռուսաց կառավարութիւնը մտադիր է հերթական հարց դարձնել բարենորոգումների խնդիրը Թիւրքիայի եւրօպական նահանգներում։ Այս հարցով կը գումարվի խաղաղութեան երկրորդ կօնֆերենցիան, որ պէտք է դումարվի Գլազգոյում։

—«Indépendance Belge» հաղորդում է, թէ թիւրքական պետական գանձարանը դրամի չափազանց մեծ կարիք ունի։ Կ. Պոլսում անհրաժեշտ են համարում փոխառութիւն անել, բայց չը գիտեն, թէ ինչ կարելի է տալ իբրեւ գրաւական։ Բանակցութիւններ են սկսված ծխախոտի մենաւաճառի ընկերութեան հետ 200,000 թիւրքական լիրա փոխ առնելու նպատակով։

—Ռումինական լրագիրները բողոքում են այն տեղեկութիւնների դէմ, որոնք վերջին ժամանակ տարածված էին լրագիրներում աւստրօ-ռումինական զինուորական դաշնակցութեան մասին։ «Telegraful Roman» ապացուցանում է, թէ ծիծաղելի եւ անմիտ բան է վախենալ Ռումինիային սլաւօնականութեան ուրուականով։ «Իսկապէս ասած,—շարունակում է այդ լրագիրը,—մեզ ոչ ոք չէ սպառնում. իսկ եթէ մեզ վտանգ սպառնար խեղդված լինելու՝ այդ դէպքում աւելի լաւ է, որ մենք խեղդվենք սլաւօնական ովկիանոսում, քան ունգարական տիղմի մէջ»։

—Եվենում, ինչպէս հաղորդում «Berliner Tageblatt», արաբ ցեղերը կռիւ են մղում Թիւրքաց զօրքերի դէմ։ Թիւրք վալին, ոմանց ասելով, գերի է առնված, ոմանց ասելով էլ, սպանված է։ Թիւրքերի բոլոր թնդանօթները եւ հրացանները աւար են ընկել ապստամբ արաբների ձեռքը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Թիֆլիսի չոքերից պէտք էր ազատվել։

Ո՞ւր գնալ։

Այնտեղ, ուր գնում են բոլորը թիֆլիսցիները՝ Բօրժօմ, Աբասթուման, Կօջօր, Մանգլիս։

Այդպէս էլ արի։

Արդարեւ հով եւ գեղեցիկ տեղեր կան այդ ամարանոցներում, ուր ոտթից ատնջված մարմինը հանգստութիւն է ստանում։ Իսկ երեկոյեան պէտք է զգացվում նոյն իսկ վերարկուի, որի գործածութեան մասին դուք մոռացել էք Թիֆլիսում։

Սակայն Տէր մի արասցէ՝ մի երեք-չորս օրից աւելի մնաք ամարանոցներում։ Հովը եւ զովը լաւ են. բայց կենցաղավարական մթնոլորտը անտանելի է։ Այնտեղ տիրում է մի այնպիսի տաղտկութիւն, որ յուսահատեցնել կարող է մարդու։

Ոչ մի կեանք, ոչ մի շարժում։

Ցերեկով սենեակում, երեկոյեան սենեակում։ Ցերեկով կերուխումի հոգսերի ու զբաղմունքի մէջ, երեկոյեան նոյնը կամ, ինչ էք կարծում, նոյն իսկ թղթախաղ, որից ձեռք չեն վերցնում եւ ամարանոցներում։

Մանաւանդ ճնշող է այդ կողմից հայի կենցաղավարութիւնը։ Ամեն մի ընտանիք, փակված ամարանոցի վանդակի մէջ, ոչ մի զբօսանք չէ կատարում, ոչ մի մարմնամարզութիւն չէ անում, ոչ մի գրաւիչ ընդհանուր խաղ չէ կազմակերպում։

Կարծես, գնացել են ամարանոց չաղանալու կամ թուխս նստելու համար։

Իսկ շատերը, ընդհակառակը, գնացել են ամարանոց լղարելու եւ բարակելու համար։ Բժիշկները պատուիրել են նրանց քաղաքի նստած կեանքի առաջացրած եղ ու ճարպի մի մասը հալել ամարանոցներում, զբօսանքներ եւ ֆիզիկական առատ շարժումներ կատարելով։

Եթէ կայ մի փոքր կեանք, այդ ես տեսայ մանուկների եւ պատանիների չրջանում։ Նրանց կը տեսնէք վազվզելիս եւ խաղերի մէջ։ Այդ կողմից հրաչալի է Մանգլիսը, ուր եռում է մանկական կեանքը։

Իսկ փոքր ինչ հասակ առածները, պատանիները եւ օրիորդները աշխատում են նմանել աւելի մեծերին եւ երբեմնապէս պարում են երեկոյթներում երկար խնդրելուց եւ յորդորելուց յետոյ։

Ամարանոցի բնակիչները պատմում են ձեզ, իբրեւ բացառիկ դէպքերի մասին, որ նրանք գնացել են Ալգետի ափը, բարձրացել են մի որ եւ է բլուր, այցելել են Քեռօղլին կամ Ուձօի ուխտատեղը։

Այն էլ չատ անգամ ձիով կամ կառքով։

Ի հարկէ, եթէ կարելի է միայն կառք տանել այնտեղ։

—Ինչու՞ ոտքով չը գնացիք, հարցնում էք դուք։ Մեծ խմբով դա չատ զուարճալի կը լինէր։

—Կը յոգնէինք, պատասխանում են ձեզ։

Միայն թէ չը յոգնեն։

—Գործներդ ինչ է, որ այդքան վախենում էք յոգնելուց, հարցնում էք դուք։

Ժպտում են։

Հանգստանում են, հանգստանում եւ հանգստութիւնը կատարեալ անելու համար ոչինչով չեն պարապում, իսկ երբ անգործութիւն համար, եւ սուերը ձգվում են ծովի մէջ...

Այստեղ աւազի վրա առաւօտից երեկոյ թափառում են ոտաբոբիկ կիսամերկ մանուկներ, որոնց զբաղմունքն է ողորմութիւն խնդրել, կամ ծովը ձգած պղնձէ դրամները գտնել հանել ջրից. յաճախ մի քանիսը միանգամից են ծովը նետվում եւ իրար խեղդում ջրերի մէջ, մինչեւ որ մէկն ու մէկը աջողեցնում է փախցնել դրամը։ Ես երբէք չեմ կարող մոռանալ մի տեսարան. հինգ մեծ ու փոքր երեխաներ չրջապատել էին մի տարիքաւոր հարուստ պարոնի եւ խնդրում էին սու ձգել ծովը. կենսասէր կօմիկը սաստիկ զուարճանում էր տեսարանով. բայց աւելի հետաքրքիր դարձնելու համար՝ նա աւազի վրա ձեռնափայտով մի դիծ քաշեց, կարգով կանգնացրեց մանուկներին այդ դծով եւ մի բուռը սուեր ձգեց միաժամանակ աջ ու ձախ. չչկված մանուկներն իրար խառնվեցին, մէկը դէպի աջ, միւսը դէպի ձախ վազեց, ի վերջոյ իրար վրա ընկան աշխատելով խլել դրամները. փոքրերը ոտքի տակ մնացին ճխլվելով, ճչալով, իսկ «ողորմած» պարոնը հեռուից պինդ հոհոում էր իր հանճարեղ գիւտի աջողութեան համար։

Երեխաներից ամենից տրորվածը մի փոքրիկ սիրունատես, կայտառ արարած էր. նրա գլուխը մի քանի անգամ խառնեցին աւազի հետ, քիթ ու բերանը տրորեցին փոշու մէջ, բայց եւ այնպէս նա աջողեցրել էր մի սու ճանկել. ամենից չատ այդ մանուկն ինձ հետաքրքրեց, մտեցայ, խօսեցրի, անունը հարցրի եւ բազդի մի տարօրինակ հեգնութեամբ այդ փոշիների մէջ թաւալած, քաղցած, գզված մուրացիկ մանուկը կրում էր իտալական արքայի անունը,—նա կոչվում էր Հումբերտօ. խեղճ Հումբերտօ, նա այնպէս երջանիկ էր իր սուով, որ չը նայելով իր բաւական խղճալի արտաքինին, հորթի պէս ցատկոտում էր աւազի վրա եւ պինդ պինդ ծիծաղում ցոյց տալով իր փոքրիկ առամների շարքերը։ Տանջանքի maximum-ով ձեռք բերած վայելքի այդ minimum-ը, ինչպէս բոլոր դժբաղդներին, նոյնպէս եւ փոքրիկ Հումբերտօին երջանիկ էր դարձրել. նա ծիծաղում էր սրտանց. ծիծաղում էր նաեւ դրամ չպրտող վայելչասէր բուրժուան. որքան մեծ տարբերութիւն կար այդ երկու ծիծաղների մէջ։

Ծովին նայեցի. հեռու հեռու հորիզոնից մեծ ու փոքր ալիքներն, իրար հրհրելով, գալիս էին դէպի ափերը, դուրս էին ձգվում, լիզում աւազները, ապա յետ գնում քրքիջով թողնելով ափին զանազան կենդանիներ. մանուկները այն էլ էին հաւաքում, բայց էլ չէին խեղդում իրար,—բնութեան տուրքն առատ էր, ամենքն էլ բաժին ունէին, բնութիւնը մայր է, նա հեգնել չը գիտէ, մարդն է դահիճ իր նմաններին, նա է հեգնում խեղճութիւնը։

Վենետիկում մուրացկանութիւնն այն աստիճան զարգացած է, որ մի քանի պարապմունքներ, որոնք ուրիշ երկիրներում պատուաւոր ձեւով հաց վաստակելու միջոց են ծառայում, այստեղ սերտ կերպով միացած են մուրացկանութեան հետ։ Ծաղկեվաճառ կինն այստեղ իր փունջը պատուաւոր կերպով չէ առաջարկում, այլ համարձակ մօտենում է եւ առանց մի բան ասելու՝ ամրացնում է օտարականի կրծքին ու լուռ սպասում է իր տասը սանտիմին։ Գօնդոլավարները, որոնք այստեղի

նից յոգնում են, նորից մտածում են հանդըստութեան մասին։

—

Նստած հանրակառքի մէջ՝ մենք խօսում էինք ամարանոցի կեանքի մասին։ Մենք ցաւում էինք, տեսնելով, որ մեր մէջ մարդիկ զուարճանալ, խելացի եղանակով ուրախ եւ զուարթ ժամանակ անցկացնել չը գիտեն։

Այդ չը գիտեն՝ խօսք չը գիտեն։ Իսկ մի ամբողջ դասակարգ էլ ոտքով զբօսանքներ չէ կատարում, յաճախ փողոց չէ դուրս գալիս՝ այն պատճառով, որ իրան չէ ուզում էժանացնել, որ իրան համարում է բարձր դիրքի տէր, որին վայել չէ երկիր իջնել, այլ որը պէտք է մշտապէս բազմէ կիօսկներում։

—Ի՞նչ հասկացողութիւն՝ դիրք պահպանելու գաղափարի մասին, բացականչեց հանրակառքի մէջ նստած մի երիտասարդ։

—Այդ բարձր դիրքի նշաններից մէկն էլ այն է, որ նրան պատկանողները վռնդել են գործածութիւնից այն լեզուն, որով խօսում է դէմօսը, նկատեց մի գաւառացի պարոն։

—Արիստոկրատ ին, չի ըլի, էդէնց է լայիղ նրանց, վունց կուլի, նկատեց ինձ մօտ նստած հարեւանս։

Դա Թիֆլիսի հին բնակիչներից մէկն էր, որ շատ բաներ էր տեսել իր կեանքում։

—Ամա էն էլ կայ, վուր դրանք «ֆրաժէ» արիստոկրատներ ին, շարունակեց նա։ Իս դրանցը լաւ կու ճանչնամ, ամեն մէկի ափալաթը լաւ գիտեմ։ Ֆրաժէ ին։

—Ի՞նչպէս թէ ֆրաժէ, հարցրի ես։

—Գանա ֆրաժէ չիս գիդի, ֆրաժէ գդալ, ֆրաժէ սերվիզ։

—Գիտեմ։

—Էտոնք էլ իսկականը չին, բացատրեց ուղեկիցս։ Ղալբ ին, կլեկած ին, ֆրաժէի հաշումն ին։ Լաւ կու ճանչնամ։ Թուղ մէ ինձմէն էլ հարցնին է։

—

Գնացէք գիւղ եւ տեսէք, ինչ է անում գիւղացու ընտանիքը։

Ամենքը գործի մէջ են։ Ամենքը ֆիզիկական աշխատանք ունեն։ Տղամարդը երկրագործական պարապմունքի, կինը տան, այգու, պարտէզի գործերի մէջ։ Մանուկները օգնում են ծնողներին։

Ֆիզիկական զարգացման համար գիւղացին ունի բաւականաչափ աշխատանք, իսկ երբեմն աւելի, քան հարկաւոր է։

Երբ գիւղացին ստանում է եւ լաւ սնունդ, այն ժամանակ նա իսկապէս շատ լաւ զարգանում է, հասակ է բռնում, առողջ ժառանգներ է ծնում, ուժեղ եւ ջղային սերունդ է տալիս։

Այն ժամանակ, երբ քաղաքացին ֆիզիկական աշխատանքի բացակայութիւնից չափազանց չաղանում է եւ անհրաժեշտութիւն զգում լողալու, բարակելու, որպէս զի ծանր տկարութիւնների չենթարկվի, այդ ժամանակ գիւղացին կարօտ է մնում լաւ սնունդի, որ նա էլ փոքր ինչ չաղանայ եւ լքցվի։

Քաղաքի մեր ազգաբնակութիւնը, մանաւանդ երբ նա ապահովված դասակարգին է, զրկված է ֆիզիկական աշխատանքից։

Մանուկները փոքր հասակից դպրոց են ուղարկվում, ուր տասնեակ տարի շարունակ մատաղ կազմուածքը ստիպված է ճնշվել, նեղվել, սեղմվել եւ թուլանալ, տալով հասարակութեան փուխր եւ քնքոյշ արարածներ, որոնք անկարող են գիմանալ ամենաթեթեւ պատահարներին, օդի ծայրայեղ արտայայտութիւններին, կերակրի փոփոխութիւններին։

Թէ դպրոցում, թէ տանը՝ չը կան մարմնամարզական պարապմունքներ, չեն կազմակերպվում զբօսանքներ, խաղեր, մարմնի մասերի կանոնաւոր վարժութիւններ։

Մանաւանդ այդ կողմից անբաւարար է կանացի սեռի ֆիզիկական զարգացումը։ Եւ ահա մեր առաջն են թուլակազմ օրիորդներ եւ հազար ու մի տկարութիւններով տիկիններ։

Ֆիզիկական թուլութեան եւ տկարութեան հետ զուգընթաց հանդէս են գալիս եւ մտաւոր թմրութիւն, բարոյական տարտամութիւն, կեանքի գործերում անտարբերութիւն։

Այդ խուսր երեւոյթի դէմ կուռում են ուրիշ երկիրներում։ Ինչու մենք էլ չը հետեւենք։

Ի դէպ՝ դուք ամենքդ մի քանի օր շարունակ կարդում էիք լրագիրների հեռագրական բաժնում տեղեկութիւններ բազէների մասին։

Բազէների հանդէս, բազէների ժողովներ, բազէների խմբական տօնակատարութիւններ, բազէների ներկայացուցիչների ճառեր, կենացներ եւ այլն։

Ովքեր են բազէները։

Այդ անունով յայտնի են չեխերի եւ առհասարակ Աւստրիայի սլավօնական ազգերի մէջ բոլոր այն անձերը, որոնք զբաղված են կանոնաւոր մարմնամարզական վարժութիւններով եւ պատկանում են այդ նպատակով կազմակերպված ընկերութիւններին։

Բազէների թիւը Աւստրիայում հասնում է 16,000-ի, որոնցից 1000-ը պատկանում են քնքոյշ սեռի ներկայացուցիչներին։

Այդ կազմակերպութիւնների նպատակն է տարածել ֆիզիկական վարժութիւնների գաղափարը եւ նպաստել զարգացնելու ֆիզիկական ոյժը ազգաբնակութեան մէջ։

Այս տարի բազէների ժողովը առանձին ուշադրութեան արժանացաւ եւ նոյն իսկ քաղաքական նշանակութիւն ստացաւ։

Բայց դա բոլորովին ուրիշ խնդիր է։

Ես չեմ պաշտպանում բազէական խմբերի կազմակերպութեան մանրամասնութիւնները եւ վէճերի մէջ չեմ կամենում մտնել նրանց կողմնակի դիտաւորութիւնների մասին։

Ես խօսում եմ ֆիզիկական զարգացման խնդրի թէ անհատական եւ թէ հասարակական մեծ կարեւորութեան մասին։ Եւ այդ տեսակէտից յիշատակում եմ այդ ձգտման խոշոր արտայայտութիւններից մէկը։

Վրթին

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

27 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված են Բարձրագոյն հրամաններ. 1) աղաղական մզուածքի եւ միմոզայի կեղեւի մաքսի փոփոխութեան մասին. կվէբրախեան ծառը, դերանների ուցախի ձեւով, եւ միմոզայի կեղեւը, բացի փոշի դարձրածից, ներս են թողնվում առանց մաքսի. շագանակի, հեմլոկի, կվէբրախի, միմոզայի, սոճիի եւ եղեւնի աղաղային մզուածքներից, ինչ ձեւով էլ լինեն նրանք, վերցվում է պուդիցը 45-ական կոպէկ. 2) այն մասին, որ խաղողի մասները աղատվում են մաքսահարկից։

Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը, վերադառնալով մի քանի ջրային ճանապարհները եւ երկաթուղիները դիտելու համար կատարած ուղեւորութիւնից, ստանձնեց մինիստրութեան կառավարութիւնը։

ՕՐԵՆԲՈՒՐԳ։ Այսօր այստեղ հանդիսաւոր կերպով տօնվում է այն օրվան տասնամեայ տարեդարձը, երբ Թագաւոր Կայսրը, Թագաժառանգ եղած ժամանակ, այցելեց Օրենբուրգ։

ՊԱՐԻԶ։ Ամեն ինչ կարծել է տալիս, որ Ֆրանսիայի եւ Թիւրքիայի մէջ ծագած խնդիրը շատ շուտով կը լուծվի բաւարար կերպով։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէր հաղորդում է Գրէտորիայից, որ Ստէյնակէրի հեծելազօրքին պատկանող մի պահակախումբ, որ բաղկացած էր 25 հոգուց, յանկարծ յարձակման ենթարկվեց բօէրների կողմից ու գերի ընկաւ։

ԴՈՒՐԲԱՆ։ Կիտչենէր պրօկլամացիա հրատարակեց, որի մէջ սաստիկ դատան միջոցներ է յայտարարում։ Պրօկլամացիան դոհութեամբ ընդունվեց Դուրբանում, որովհետեւ այդպիսի միջոցներ վերին աստիճանի անհրաժեշտ են համարվում պատերազմին վերջ տալու համար։

ՍՕՖԻԱ։ Վարնայի բերդապահ զօրքի օֆիցէրները երէկ հացկերոյթ տուին փոխ-ծովապետ Հիլդեբրանդի եւ ռուս օֆիցէրների պատուին։ Փոխ-ծովապետը եւ Կարավելով ու Պապրիկով մինիստրները կենաց թասեր առաջարկեցին. փոխ-ծովապետը պնդում էր, որ ռուսաց սեւծովեան նաւատորմը կը կարողանայ կատարել իր անելիքը։ Նա յոյս ունի տեսնել մի գեղեցիկ օր բոլղարական նաւատորմը ռուսաց նաւատորմի կողքին։ Այսօր փոխ-ծովապետին այցելելու համար «Սինօպ» նաւը գնացին մինիստրները, բարձրագոյն օֆիցէրները եւ բարձրաստիճան պաշտօնեաները։

ՀԱՄԲՈՒՐԳ։ Կոմս Վալդերզէէ այսօր կէսօրին ժամանեց այստեղ։ Նաւահանգիստը տօնապէս զարդարված է։ Հաղարաւոր ամբոխը ողջունեց նրան ըստ «հուռռաներով»։ Ներկայ էին կայսրի ներկայացուցիչ Վիտտիխ եւ ուրիշներ։ Վիտտիխ կարդաց կայսրի երկու հրամանագիրներ, որոնցով շնորհակալութիւն է յայտնվում Վալդերզէէին աչքի ընկնող գործերի համար եւ շնորհվում է շքանշան կաղնու տերեւներով։ Վալդերզէէ գնաց ծովային վարչութիւնը, ուր նրան ողջունեցին սենատը եւ քաղաքային խորհրդարանի անդամները։ Դիմելով քաղաքապետին շնորհակալական ճառով, Ֆէլդմարշալը չեշտեց օֆիցէրների եւ զինուորների հիանալի գործերը, որոնցով նրանք յարգանք վաստակեցին բոլոր ազգերի եւ նոյն իսկ չինացիների կողմից։ «Այդ եւս աւելի գնահատելի է նրանով,—ասաց նա,—որ ասիացին յարգել գիտէ միմիայն մեծ ոյժը»։ Նախաճաշից յետոյ Վալդերզէէ գնաց իր մասնաւոր բնակարանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Օրէնքների ժողովածուի» մէջ հրատարակված է Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնայի եւ Օլդէնբուրգեան Պրինց Պեսար Ալէքսանդրովիչի պալատի շտատը։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէր հեռագրում է Գրէտորիայից. «Հրամանատար Դէվիլիէ եւ երկու ֆէլդկօրնէտ անձնատուր եղան Վարմբատում։ Դէվիլիէ երկրորդ հրամանատարն էր Բէյերի իշխանութեան տակ գտնվող զօրքում»։

ԼՕՆԴՕՆ։ Երէկ այն յանձնաժողովի նիստում, որ քննում է հարաւային Աֆրիկայում մղվող պատերազմից առաջացած վնասների վարձատրութեան պահանջները, նախագահը՝ ամերիկական պատգամաւորի հարցին պատասխանեց, որ պահանջների նախնական քննութիւնը կատարելուց յետոյ յանձնաժողովը կը ցրվի երկու ամսով։ Աւստրիական պահանջները ամենից առաջ կը քննվեն. աւստրիական պատգամաւորը առաջարկեց յետաձգել քննութիւնը, բայց նախագահը մերժեց այդ առաջարկութիւնը եւ յոյս յայտնեց, որ պատգամաւորները ներկայ կը գտնվեն պահանջների նախնական քննութեան միջոցին, իսկ եթէ այդպէս չը լինի, այն ժամանակ պահանջները չեն ենթարկվի նախնական քննութեան, որովհետեւ այդ դէպքում հարց ու փորձի չեն ենթարկվի ոչ պահանջատէրերի վկաները, ոչ նրանց հակառակ վկաները։

ՍԱՐԱՏՕՎ։ Գիշերը այրվեց Բորիսի ահագին չոգիաղացքը։ Այրվեցին մի քանի բանուորներ։ Վնասը հասնում է 600,000 ռուբլու։

ՕԴԵՍՍԱ։ Յուլիսի 25-ի գիշերը Վեսեոլիյ Կուտ կայարանում ապրանքատար № 69 գնացքը ընդհարվեց դէի վրա կանգնած մի չոգեկառքի. ընդհարման ժամանակ վնասվեցին չոգեկառքերը. առաջին երեք վագոնները, որոնք բարձած էին վարունգով, թռչուններով եւ անասուններով, ջարդվեցին։ Վնասվեց կենդանի ապրանքը ուղեկցող Կրէչինիցկիյ. սպանվեց Պոդոլեան նահանգի գիւղացի Եացկով, որ անտոմսակ ծածուկ նստել էր գնացքը։

ԽԱՐԿՕՎ։ Փոխադարձ կրէդիտի ընկերութեան ամբողջ գործունէութիւնը քան օրվայ ընթացքում ստուգելով, յանձնաժողովը գտաւ՝ 1) ընկերութեան դոյքը անպակաս. 2) զեղջված մուրհակները մի միլիոն ռուբլի գումարի՝ սօլիդ. կասկածելի՝ հազիւ ամբողջ գումարի 4%-ը. 3) յատուկ հաշիւների մէջ նկատված են անկանոնութիւններ, ինչպէս եւ այն, որ ահագին գումարներ, որոնք ընդհանուր առմամբ դերազանցում են ընկերութեան պահեստի եւ դարձուն դրամագլուխները, տրված են մի եւ նոյն անձին. այդ վերջին գործողութիւնից մնասը կէս միլիոնից աւելի է։ Ընկերութեան անդամներին անհրաժեշտ է օգոստոս եւ սեպտեմբեր ամիսների ընթացքում վճարել՝ իւրաքանչիւրին բացված կրեդիտի գումարի 12%-ի վերջոյ յանձնաժողովը առաջարկում է արգելել կրէդիտով օգտվել այն անձանց, որոնք ծառայում են ընկերութեան մէջ ընտրութեամբ կամ վարձովի։ Այսօր կը կայանայ ընկերութեան անդամների ժողովի շարունակութիւնը։

ՊԱՐԻԶ։ Գեներալ Սիւսիլիօն, որ յուլիսի 26-ին ստանձնեց Զինաստանում մնացող բերդապահ բրիգադայի հրամանատարութիւնը, կառապաններն են, հեռուից են կանչում օտարականին. նրանց կողքին միշտ պատրաստ եւ նրանց օգնական թափառաշրջիկ մարդկանց մի դասակարգ կայ, որոնք, երկար կոթով կեռ երկաթն ուսերին, կանգնած են ծովափին եւ օտարականին գօնդօլները ցոյց տալով, օգնում են նրան նստելու, ապա գլխարկը մեկնած ըստանում են իրանց մի քանի սուին։ Սրանք էլ համարակիր մետալէ նշան ունեն ուսերին եւ չը նայելով դրան՝ ասես ողորմութիւն են խնդրում եւ ոչ վարձ։

Մի մի մուրացկանների խմբեր են այստեղի բեռնակիրները եւ ուղեցոյցները, որոնք խօսում են դերմաներէն, անգլիերէն եւ ֆրանսերէն՝ զանազան ազգերի ճանապարհորդներին ծառայութիւն մատուցանելու համար։ Վարժված աչքեր ունեն հարիւրաւոր մարդկանց մէջ օտարականին որոշելու եւ նրան իրանց որ եւ է ծառայութիւնը առաջարկելու համար. նրանք իսկոյն հասկանում են, թէ շրջող օտարականն ինչ կարիք ունի. եթէ դուք պօստային արկղն էք փնտռում, մէկ էլ կը տեսնէք մէկը ձեր կողքով քայլում է եւ ձեզ ցոյց է տալիս ձեր փնտռածը մոտիկ պատի վրա եւ ապա վարձը պահանջում մուրացկանի ձեւով։ Եթէ լրջօրէն որ եւ է տեղեկութիւն էք հարցնում, նա ձեզ կը տանի կը պատացնի հեռաւոր փողոցներ, ճանապարհը դիտմամբ կերկարացնի՝ աւելի դրամ վաստակելու համար։ Անհնարին է մի փողոց հարցնել, մի հասցատուփ փնտռել առանց մի քանի սու ծախսելու. ում եւ դիմելու լինէք, իսկոյն նրա կողքին կը յայտնվեն այդ առաջնորդները իրանց խիստ կասկածելի արտաքինով եւ յանձն կառնեն ձեզ ուղեկցել. փոյթ չէ նոյն իսկ, եթէ ձեր փնտռած փողոցը այնքան մօտիկ է, որ նա մատով կարող է ցոյց տալ եւ անցնել։

Եւ որչափ կեղտոտ է այստեղի ժողովուրդը. սրանց ճաշարանները, սեղանները, բաժակները երբեմն անտանելի են։ Եթէ այդ նկատում ես, ծառան քեզ հետ համաձայնում է ամենայն սառնասրտութեամբ։

—Այս բաժակի ջրից հոտ է գալիս, ասացի մի անգամ ճաշարանի ծառային։

—Այո, պարոն, շատ անպիտան հոտ է գալիս, ասաց նա, հոտոտելով բաժակը, եւ ցած դրեց, հեռացաւ։

Գէաք եղաւ նորից կանչել նրան եւ ջուրը փոխել տալ։ Յայտնի ճաշարանում անգամ սեղանի սփոցներից եւ անձեռոցներից սապոնի հոտ է գալիս։ Մի պանսիօնում, ուր ճաշում էին նաեւ մի քանի ծովային օֆիցէրներ, երբեմն այնպիսի անձեռոցիկներ էին տալիս, որ անհնարին էր շրթունքներին մօտեցնել առանց զզուանքի. բաժակները հօ անտանելի էին։ Մի քանի անգամ Վենետիկում – լուացված սպիտակեղէնը հազիւ թէ հագնել կարելի լինի, այն ատիճան դեղնվում են։ Աղքատութիւնն ու կեղտոտութիւնը եղբայրներ են. աղքատ, մշտապէս կարօտ ժողովուրդը մաքուր լինել չէ կարող։

Այս անվերջ մուրացկանութիւնը, խաբէութիւնը, չորս կողմում տիրող այս կեղտոտութիւնը բնականապէս զզուանք եւ զայրոյթ են պատճառում, բայց երբ մարդ մի փոքր աւելի սառն է դառնում, այս տխուր երեւոյթները դադարում են վրդովեցուցիչ լինելուց եւ միայն ցաւ են պատճառում։ Ծայրայեղ կարօտութիւնը եւ ծայրայեղ հարստութիւնը դէմ առ դէմ կանգնած՝ բնական է, որ մէկը դառնայ ձեռք մեկնող, աղերսող, մուրացող, իսկ միւսը՝ գոռող եւ արհամարհող. իսկ հզօրի, ունեւորի մշտատեւ լուծը զարգացնում է խեղճերի մէջ ամենաստոր տրամադրութիւններ, ամենացած հակումներ։ Եւ ճշմարիտ, եւրօպական ոչ մի քաղաքում գուցէ այնքան մուրացիկներ, ձեռք մեկնողներ, խաբեբաներ չը կան, որքան Վենետիկում։ Թուում է, թէ մարդ այստեղ պաշարված է կողոպտողներով, խաբեբաներով, աւազակներով. այստեղի ժողովուրդը նման է մեծ ուխտատեղիների մօտ ապրող պորտաբոյծ գիւղական ժողովուրդներին, որոնց աչքը շարունակ ուրիշի ձեռքին է։

Դարերի ընթացքում սովորած նախ ապրել իրանց բռնակալ իշխան ազնուականների ողորմութեամբ, նրանց հովանու տակ, նրանց սեղանի փշրանքներով, այժմ էլ դարձեալ կարօտ, դարձեալ աղքատ, նա նայում է հարուստ ճանապարհորդներին, նրանց է դիմում ամենանպատիւ միջոցներով իր ողորմելի գոյութիւնը պահպանելու համար։ Մի ժամանակ իր հարստութիւնը, իր աշխատանքի արդիւնքը իր նախկին տէրերի, ձրիակեր ազնուականների ձեռքին էր, այժմ էլ իր ամենամեծ արդիւնաբերութիւնը (ապակեղէնի գործարանները) հարուստ անգլիական ընկերութեան է պատկանում, որ իր ահագին վաճառանոցն ունի աւ. Մարկոսի հրապարակի վրա, հանրապետական Վենետիկի հին պալատներից մէկում։ Եւ ժողովուրդը շարունակում է մնալ մուրացիկ, քաղցած։ Դարերի խեղճութեան ու կարօտութեան մէջ այս ժողովուրդը կորցրել է իր արժանապատուութեան հասկացողութիւնը եւ դարձել է մուրացիկների մի բանակ, սովորել է մի կերպ գլուխ պահել, քչով, շատ քչով բաւականանալ։

Ես յիշում եմ մեր գաղթականների կեանքից մի դէպք, որ գուցէ աւելի քան ընաւորիչ է բոլոր նման երեւոյթների համար։ Գաղթականի անունը Սերոբ էր. նա չորս հինգ մանր երեխաներ ունէր. նպաստ էինք բաժանում, չորեր էինք տալիս խիստ ցրտերից պաշտպանվելու համար, բայց որ մէկին,—կարիքը ծով էր, իսկ օգնութիւնը չնչին։ Սերոբին էլ տուինք ինչ որ հնարաւոր էր, յետոյ ես վշտով իմացայ, որ նա ինձ խաբել է եւ աւելի է տարել։ Սերոբին կանչեցի եւ յանդիմանում էի իր արածի համար, եւ խիստ էի յանդիմանում, որ նա չէ կամեցել հասկանալ, թէ իր խաբէութեան շնորհիւ զրկվում է իր ընկերներից, իր հարեւաններից մէկն ու մէկը։ Նա ցաւոտ, կարմրած աչքեր ունէր, որ երբէք վեր չէր բարձրացնում. ես դեռ յիշում եմ այդ խեղճ աչքերը, այդ կախած գլուխը, այդ ջարդած վիճակը։ Նա դառնութեամբ ու հաւերութեամբ լսեց իմ բոլոր ծանր խօսքերը, ապա ձեռքը ճակատին տարաւ, կասես իր ամօթը ծածկելու համար, եւ արտասուքից խեղդված ձայնով ասաց,—«Քո ոտաց մեռնիմ, արդար կասես, ամա մենք մեր խեղճութենէ կը խաբենք, մեր ջանին խօշի»...

Նա իրաւունք ունէր եւ ես գլխակոր ու ամօթահար մնացի։

Ա. Ահարոնեան

հաղորդում է, որ Վուարօն եւ Բալիւ գեներալները մի քանի օֆիցէրների հետ ուղեւորվեցին Եապօնիա։

ԽԱՐԿՕՎ։ Այստեղի նահանգական դատարանի պրիստավները զանազան ժամանակներ կնքեցին ձերբակալված բանկային գործիչներին պատկանող այլ եւ այլ գոյքեր (առձեռն դրամ, բաժնետոմսեր եւ տնային պարագաներ) մօտ 190 000 ռուբլի գումարի, չը հաշուելով անշարժ կայքերը, տները ու կալուածները, որոնց վրա արգելք է դրված գրաւականներից ազատ գումարի չափով։ Առ այժմ ուրիշ օչինչ գոյք չէ գրանված։

ԼՕԶ։ Յուլիսի 26-ի գիշերը հրդեհ պատահեց Լուսի Դէյեր բաժնետիրական ընկերութեան գործարանում։ Վնասը հասնում է 125,000 ռուբլու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յուլիսի 27-ին Գատչինայում տեղի ունեցաւ Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնայի պսակադրութիւնը Օլդենբուրգեան Պրինց Պեատր Ալէքսանդրովիչի հետ։

28 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հրատարակված է Բարձրագոյն հրովարտակ Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնայի ամուսնացման մասին Օլդենբուրգեան Պրինց Պեատր Ալէքսանդրովիչի հետ։

Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնա նշանակվում է չէֆ 36-րդ դրագունեան ախտիրեան գնդի, որին հրամայված է կոչվել 36-րդ ախտիրեան Նորին Բարձրութիւն Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնայի գունդ։

Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրօվնայի եւ Օլդենբուրգեան Պրինց Պեատր Ալէքսանդրովիչի պսակադրութիւնից յետոյ, Բարձր Նորապսակները ուղեւորվեցին Բաձէն՝ Օլդենբուրգեան Պրինցուհի Եւգենիա Մաքսիմիլիանովնայի կալուածը, Վօրոնեժի նահանգում։

ՍԱՏՈՎ։ Օրլեանեան պրինց Հենրիկոսը այսօր վախճանվեց։

ՍՕՖԻԱ։ Վարնայի բերդապահ զօրքի օֆիցէրները երէկ պարահանդէս կազմեցին փոխ-ծովապետ Հիլդէբրանդտի եւ ռուս օֆիցէրների պատուին։ Այսօր, Վարնայի ազատման տարեդարձի առիթով, տաճարում պաշտամունք կատարվեց, որին ներկայ էին փոխ-ծովապետը, մինիստրները, բարձրաստիճան պաշտօնեաներ, ռուս եւ բոլգար օֆիցէրներ եւ բազմաթիւ ուրիշ աղօթողներ։ Ժամասացութիւնից յետոյ զօրահանդէս տեղի ունեցաւ։ բերդապահ զօրքը եւ ռուս ծովային զօրախումբի զինուորները հանդիսաւոր մարշով անցան փոխ-ծովապետի առջեւով։ Այս երեկոյ՝ փոխ-ծովապետ Հիլդէբրանդտ «Սինօպ» նաւում հացկերոյթ է տալիս բոլգար մինիստրների, բարձրաստիճան պաշտօնեաների եւ օֆիցէրների պատուին։ Գիշերը ռուսաց ռազմանաւատորմը ճանապարհ կնկնի դէպի Բուրգաս։

ԼՕՆԴՕՆ։ Լօրդերի ժողովը երրորդ ընթերցումով ընդունեց փոխառութեան բիլը։

ԼՕՆԴՕՆ։ Թագաւորը, թագուհին, պրինցուհի Վիկտորիան եւ յունաց Նիկոլայ արքայազն երեկոյեան ժամի 10-ին ուղեւորվեցին Կրոնբէրգ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴՊՐՈՑ
ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
երկու սեռի մանուկների համար։ Ընդունվում են երեխաներ պատրաստականի բոլոր բաժանմունքները եւ նոր բացվելիք առաջին (աղջիկների համար երկրորդ) դասարան։ Աշակերտների թիւը սահմանափակված է։ Դիմել օգոստոսի 26-ից։ Բեհբութեան (Նօվօ-Սադովայա) փող., սեփ. տ. № 29։ 2—20

ՀՐԱՒԻՐՎՈՒՄ Է ՎԱՐԺՈՒՀԻ
Մանկական պարտէզի համար Թաւրիզի Առաքելականի Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը 600 ռուբլի ռոճիկով։ Դիմել բժշկապետ Բ. Նաւասարդեանին, ժամի 11—12-ը։ 4—5

ԲԺՇԿ. ՎԱՀԱՆ ԵՐԺՐՈՒՆՈՒ
աշխատութիւններից ձեռք բերելու համար՝ այսուհետեւ պէտք է դիմեն. Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенберъ“ (Лорисъ-Меликовская, № 11), Г. Галустяну. Նոյն տեղը վաճառվում են զանազան գրքեր։ Ամեն մի նոր լոյս տեսած գիրք ցանկացողներին կարող ենք ուղարկել։

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՕՆԻ
յատկապէս կազմած պետական միջնակարգ դպրոցների համար (այսինքն Ե. ա. ք. Երզնկեանի)
1) Առաջին գրքոյկ, պատրաստական դասարանների համար։ Գինն է 20 կոպ.։
2) Երկրորդ գրքոյկ, առաջին դասարանի համար։ Գինն է 30 կոպ.։
Վաճառվում են Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում։ (Երք. չ.) 1—6

ԵՐԿՐԱՉԱՓ
Առաջարկում է իր ծառայութիւնը հողեր չափելու, հողերի պլան կազմելու, ամարանոցների համար հողաբաժինների յատակագիծ նկարելու, նոյնպէս եւ չինութիւնների պլաններ, նախագծեր եւ նախահաշիւներ կազմելու։
Հարցնել՝ Թիֆլիս, Բէկիչեվի գրավաճառանոց, Գոլովինսկի պրոսպէկտ կամ Գանձակայա, Արեւելեան ընկերութեան գրասենեակ։ 1—1

Կ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է բերանի եւ ատամների հիւանդութիւններ ունեցողներին։ Շինում է արուեստական ատամներ, քիթ, քիմք (обтураторъ) եւ վերին ու ստորին անդամահատված ծնոտների պրոթեզներ (резекціонные протезы).
Առաւօտեան 8—2 ժամ.
Երեկոյեան 5—8 »
Հասցէն՝ Պուշկինսկայա փողոց, № 16։ 9—25

ԲԺԻՇԿ
ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ
ԲԱԳԻՈՒՄ
ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է
Колюбякинская улица, домъ Гумилевской, № 33.
(Դ. Բօստանճեանցի կենտրոնական լուսանկարչատան դիմաց)
Հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան 8—10 ժ.
Երեկոյեան 5— 8 ժ.
Երեխաների, ներքին հիւանդութիւն եւ սիֆիլիս։ 2—7

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԴՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ՐՕՑԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ԳԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԳԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՑՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՁԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։
ՊՐԷՑՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՁԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Музыкалное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(կիր.)

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ
ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
„ՄԱՐԻԱՆԱ“
Դրամա 3 գործ. եւ վերջաբանով.
Խ. ԷՋԷԳԱՐԱՑԻ
Թարգմ. Արսէն Կրասիլնիկեանի
Այս հրատարակութեան վաճառման ամբողջ արդիւնքը յատկացնվում է «ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԱՆ»։
Գիրքը տպված է ամենարնտիր թղթի վրա, բաղկացած է 248 երեսից եւ արժէ 1 ռուբլի։
Դիմել՝ Книжный магазинъ «Гуттенберъ», Лорисъ Меликовская, № 11, Г. Галустяну.

ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ
500 ռուբլի
Յուլիսի 24-ին, երեկոյեան, կորցրած է մի քսակ, որի մէջ գտնվում էին՝ ա) վեց հատ 5%-աբեր գրաւաթղթեր Թիֆլիսի հողային բանկի, 2400 ռուբլի գումարի, բ) պարտամուրհակներ, անդորրագրեր եւ դրամական ստորագրութիւններ եւ գ) 65 ռուբլի դրամ։ Գտնողին հարկադրաբար խնդրում են հասցնել կորցրածը հետեւեալ հասցէով. Разъѣзжая (у памятника Воронцову), տ. № 17, որտեղ նրան կը տրվի վարձատրութիւն
500 ռուբլի
3—5

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ»—«MESSAGERIES MARITIMES».
4/17-ին օգոստոսի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, «CAMBODGE» շոգենաւը, հանդիպելով՝ Տրապիզոն, Սամսուն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Սալոնիկ, Սիրա, Պատրաս, Մարսէյլ, Հավր եւ Լոնդոն։
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչեւ Պարիզ, նոյնպէս մինչեւ Շանղհայ (Չինաստանում), Վլադիվոստոկ գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել Թիֆլիսում Ընկերութեան գործակալ՝ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալլերէյում № 127 գրասենեակը, տէլէֆոն № 608։ Գրասենեակը բաց է 9—1-ը եւ 5—7 ժամը երեկոյեան։ 1—1

Սարգիս Վ. Աբրահամեան
Адр. Сололаки, уголъ Гановской и Садовой, д. Маркарова, № 27 и 31.
Սովորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարապմունքներ գտնելու համար
ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ
1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով. գիւղատնտեսական, նաւթարդիւնաբերական, գործարանական, առեւտրական, բանկային եւ շոգենաւային հաշուապահութիւն։
2) Առեւտրական թուաբանութիւն.
3) Առեւտրական թղթակցութիւն։
4) Պարտամուրհակի օրէնքները։
5) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։
Հասցէն՝ ՍՕԼՕԼԱԿ, Գանձակայա եւ Սադովայա փողոցների անկիւն, տուն Մարգարեանի №№ 27 եւ 31։
Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան։ 2—25

Թիֆլիսի Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
պատիւ ունի հասցնելու ի տեղեկութիւն պ.պ. փայատէրերի, որ ընկերութեան ընդհանուր ժողովը տեղի կունենայ չորեքշաբթի, օգոստոսի 1-ին, երեկոյեան 8 ժամին, Գուրգէնովի տանը, Միքայէլեան փողոցում, № 143, Վէտցէլի հիւրանոցի կողքին։
Զրաղմունքի առարկաներն են՝
1) Վարչութեան մի դերեկտորի ընտրութիւն,
2) Վերաստուգող յանձնաժողովի մի անդամի եւ երեք կանդիդատների ընտրութիւն,
3) Վարչութեան զեկուցումն։ (17, 24, 30) 3—3

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՆ
1) «ՎՏԱԿ» հանդէսը, որ արժէ Թիֆլիսում 1 ր. 50 կ., քաղաքից դուրս 2 ր.։ Յատկապէս այս հանդէսի համար պատրաստվում են չքեղ եւ հաւեստ կազմեր 40 կ., 50 կ., 75 կ. եւ 1 ր.։ 2) Վրթանէս Փափազեանի «ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ» գրքոյկը, որ Թիֆլիսում արժէ 50 կ., քաղաքից դուրս 65 կ.։—Յիշեալ երկու գիրքը ի վաճառ կը հանվեն գրաքննիչից իրաւունք ստանալուց յետոյ, մօտաւորապէս յուլիսի վերջին։ 3) Աչղ Զիւանիի «Քեաբաբ եւ Ասլիի» հէքիաթը, գ. 60 կ., քաղաքից դուրս 80 կ.։ Գումարով գնողներին զիջումն կը լինի։ «Վտակի» համար բաժանորդագրութիւնը Կենտրոնական գրավաճառանոցում շարունակվում է։
Դիմել՝ Тифлисъ. Центральная Книжная Торговля. 8—10

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան»
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առեւտրական թուաբանութիւն։
Գ) Առեւտրական նամակագրութիւն։
Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե) Գեղագրութիւն և ամենավատ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1901 թվի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ։
ԻԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՌՈՒԲԼԻ
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻՍ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գտնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ 13—25

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Іюля 1901 г.
Электропечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванкская ул.